

Նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխության պարագայում վճարման ենթակա հատուցման գումարի վերահաշվարկման կարգ

1. Սույն կարգով սահմանվում է նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխության պարագայում վճարման ենթակա հատուցման գումարի վերահաշվարկման կարգը:

2. Սույն կարգի իմաստով հատուցման դեպքի փոփոխություն է համարվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (**այսուհետ՝ Օրենք**) 4-րդ հոդվածի 7-րդ մասում նշված դեպքերը: Սույն կարգում այլ հասկացությունները կիրառվում են Օրենքով սահմանված իմաստով:

3. Հատուցման դեպքի փոփոխության հետևանքով վճարման ենթակա հատուցման գումարի վերահաշվարկ չի կատարվում, եթե՝

1) զինծառայողը դադարել է համարվել անհայտ բացակայող և ճանաչվել է 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձ.

2) զինծառայողը դադարել է համարվել անհայտ բացակայող և մահացել կամ ճանաչվել է մահացած.

3) 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողը մահացել է:

4. Եթե զինծառայողը դադարել է համարվել անհայտ բացակայող և ճանաչվել է 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ կամ 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի առողջական վիճակը բարելավվել է, որի հետևանքով այդ զինծառայողը ճանաչվել է 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող անձ, ապա՝

1) Նախկինում վճարված միանվագ գումարը հետ չի պահանջվում, իսկ Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված միանվագ գումարը զինծառայողին չի վճարվում.

2) զինծառայողին վճարման ենթակա ամսական հավասար վճարների չափը որոշվում է հետևյալ կերպ՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող

միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողի գծով՝ 200.000 դրամ,

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձի գծով՝ 150.000 դրամ,
գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի գծով՝ 100.000 դրամ:

5. Եթե 2-րդ խմբի հաշմանդամություն ունեցող զինծառայողի առողջական վիճակը վատթարացել է, որի հետևանքով այդ զինծառայողը ճանաչվել է 1-ին խմբի հաշմանդամություն ունեցող անձ կամ մահացել է, ապա՝

1) Օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված միանվագ գումարից զինծառայողին կամ վերջինիս մահվան դեպքում՝ այլ շահառուին միանվագ վճարվում է 5 միլիոն դրամ.

2) զինծառայողին կամ վերջինիս մահվան դեպքում՝ այլ շահառուին վճարման ենթակա ամսական հավասար վճարների չափը որոշվում է հետևյալ կերպ՝

ա. պայմանագրային կամ պարտադիր զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված սպայական կազմի զինծառայողի գծով՝ 300.000 դրամ,

բ. պայմանագրային զինվորական ծառայության կամ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին ներգրավված ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի կամ տարածքային պաշտպանությանը ներգրավված կամ կամավորագրված անձի գծով՝ 250.000 դրամ,
գ. պարտադիր զինվորական ծառայության կրտսեր ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողի գծով՝ 200.000 դրամ:

7. Վերահաշվարկված չափերով ամսական հավասար վճարների կատարումը սկսվում է վերահաշվարկ կատարելու վերաբերյալ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո հերթական վճարման օրվանից և շարունակվում է մինչև՝

1) հատուցման գումարի վճարման 20 տարին լրանալը (ընդ որում հատուցման գումարի վճարման 20 տարիների հաշվարկը սկսված է համարվում այն ամսվանից

ներառյալ, երբ տվյալ զինծառայողը (իսկ զինծառայողին անհայտ բացակայող ճանաչելու պարագայում՝ Օրենքով նախատեսված այլ անձինք) առաջին անգամ ճանաչվել է շահառու և այդ հիմքով ստացել է առաջին ամսական հավասարաչափ վճարը), կամ

2) վերահաշվարկ կատարելուց հետո նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխության հետևանքով հատուցման գումարի նոր վերահաշվարկ կատարելու ամիսը ներառյալ:

8. Սույն կարգի 5-րդ կետի 1-ին ենթակետում նշված միանվագ 5 միլիոն դրամ գումարը զինծառայողին (շահառուին) վճարվում է վերահաշվարկ կատարելու մասին որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

9. Սույն կարգով նախատեսված հատուցման գումարի վերահաշվարկը կատարվում է Համապատասխան պետական մարմնի (Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայություն, կառավարությանն առընթեր Հայաստանի Հանրապետության ոստիկանություն) կողմից ներկայացված՝ նույն զինծառայողի կապակցությամբ հատուցման դեպքի փոփոխությունը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի ակտիվների և պարտավորությունների կառավարման հանձնաժողովի որոշմամբ: Վերահաշվարկի մասին որոշումն ընդունվում է Համապատասխան պետական մարմնի կողմից փաստաթղթերը Հիմնադրամին ներկայացնելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում:

10. Եթե լրացել է զինծառայողի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության ուժի մեջ լինելու ժամկետը՝ Ձինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամ (այսուհետ՝ Հիմնադրամ) նախկինում ներկայացված բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական մարմնի տված տեղեկանքի համաձայն, ապա Հիմնադրամի կողմից նշված տեղեկանքում սահմանված օրվանից կասեցվում է զինծառայողին կամ այլ շահառուին վճարվող հատուցման գումարների ամսական վճարումների կատարումը մինչև սույն Կարգի 9-րդ կետով սահմանված համապատասխան պետական մարմնի սոցիալական ապահովության խնդիրներ իրականացնող ստորաբաժանման կողմից Հիմնադրամին բժշկասոցիալական փորձաքննություն իրականացնող պետական մարմնի տրված նոր տեղեկանքի ներկայացումը:

11. Տեղեկանքը ներկայացնելուց հետո Հիմնադրամը

1) Վերսկսում է զինձառայողին կամ այլ շահառուին վճարվող հատուցման գումարների ամսական վճարումների կատարումը տեղեկանքը ստանալուց հետո տվյալ ամսվա հերթական վճարման օրվանից, եթե զինձառայողի հաշմանդամության խմբում փոփոխություն տեղի չի ունեցել: Ընդ որում զինձառայողին փոխանցվում է կասեցված ամիսների համար չվճարված ամբողջ գումարը:

2) սույն Կարգի 4-րդ և 5-րդ կետերով սահմանված դեպքերում և կարգով կատարում է վերահաշվարկ: Սույն Կարգի 7-րդ կետով սահմանված օրը զինձառայողին կամ այլ շահառուին է փոխանցվում նաև մինչև վերահաշվարկի կատարումը կասեցված ամիսների համար չվճարված ամբողջ գումարը:

3) Տնօրենի որոշման հիման վրա դադարեցնում է զինձառայողին կամ այլ շահառուին վճարվող հատուցման գումարների ամսական վճարումների կատարումը, եթե զինձառայողը դադարել է լինել Օրենքով շահառու, մասնավորապես դադարել է Օրենքով սահմանված 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամությունը: